Տարազը լոյս է տեսնում ծաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 12 կիրակի 24 մարտի | երկրորդ տարի 1896



Յարութիւն

Քրիստոս յարեաւ... երկինք գնաց,
Երկրում թողեց պատէրներ.
Բայց պատէրը ղրքում մնաց
Եւ աշխարհքը հեծում է դեռ։

Դեռ կուբացած ժանդ արծաթից
Պատնութիւններ են անում,
Եւ փախչելով արդար դատից
Միշտ ձեռքերն են լուանում։

Ազատում են դեռ ծաղրելով
Անմեղութեան ճակատին,
Եւ յարութեան օր տօնելով
Խաչ են հանում ճշմարտին։

Ո՜հ, կարճամիտ անզգամներ,
Դրանք այսօր կըմեռնեն,
Բայց վաղը ձեր փոշու վրայ
Նոր փառքերով կըյառնեն։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՆՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒԱՒՒ

Երանից մօտ տասնևվեցը դար առաջ, երբ տգիտութիւնը, խաւարը տիրում էր մարդկութեան մտքի ու սրտի վրայ, երբ ընկերասիրութեան բարձր զգացմունքը դեռ իր տաղմի մէջ էր, երբ —*ամենը ինձ համար ու ոչ ոք ամենի համար*— սկզբունքն էր տիրապետում, յայտնուեց Սեծ Մարգարէը, ամբոխի անկեղծ բարեկամը։ Ամեն կողմ ուր նայում էիր, թագաւորում էր անիրաւութիւն, թշնամութիւն, անէծք, մահ։ Նոյն իսկ կրօնը հանդերձ իր խարդախ առաջնորդներով կորցրել էր իր ազդեցութիւնը, դառել էր աննպատակ, անօգուտ մի բան։ Անիծորհուրդ կրօնի խաբեաց քարոզիչները փոխանակ կրօնի իմաստը վերցնելու, փոխանակ նրան անհրաժեշտ սրահանջ դարձնելու մտքի, սրտի, զոլծի համար, վերցրել էին կրօնի միայն միստիքական կողմը, վերածել էին նրա հրաշքների, ձևի, ծէսի։ Ժողովուրդը անջատած մի մարմին էր. նա գտնում էր մթութեան մէջ, չունէր բարեկամ, չունէր կա-

բիկից իր վշտերի համար: Հէնց այդ ժամանակ յայտնւում է Երկնքի Բնակիչը, վեհ մտքերի ճշմարիտ Հեղինակը, յայտնւում է նա, լռելով մի ձեռքում քանդելու, միւս ձեռքում շինելու զորձիքները: Անխնայ հալածում է նա խաւարը, հիւրը, փտածը. նա տալիս է նոր պատւէր, պնում է նոր հիմք ճշմարիտ կրօնի—*սիրիր քո ընկերին քո անձի պէս:* Քաղցրութեամբ նա մօտենում է ժողովրդին, բժշկում է հիւանդներին, կոյրերին աչք է տալիս, որ տեսնեն առաւածային խորհուրդների բուն նպատակը, խաչերի ախտիջը բացում է, որ լսեն երկնային կենաստու պատգամները, սրբում է պաւարների արտասուքը, քարոզում է աղքատներին, դերիներին ազատութեան աւետիք է տալիս:

Աչառութիւն չկար նրա մէջ. հարուստ, աղքատ, հրէայ, հեթանոս՝ միևնոյն նշանակութիւնն ունէին նրա համար: Խստատ թշնամի էր փարիսեցիներին, գրագներին, թշուառ ժողովրդի շահատէր կեղեքիչներին: Նա գնում էր հոսանքին հակառակ. վախանակ շաղաքորթելու ամեն մարդու, երեսով էր տալիս իր յանցանքը. վախանակ կեղծելու, խօսում էր ճշմարտութիւն. վախանակ իր անձի օգուտը որոնելու, զոհում էր Իր անձը մարդկութեան շահերին. նրա ամբողջ գործունէութիւնը ամփոփում են այն խօսքերը, որ գրած է նրա մասին. «Նա պաշտում էր բարիքները անելով»: Եւ ահա կայր ամբոխի կոյր առաջնորդները լարում են ամբոխի միտքը, գրգռում են նրա զէմ, համոզում են նրան, թէ անկաշառ պատուերը թշնամի է ամբոխին, թէ նրա քարոզած մտքերը հակառակ են ճշմարտութեան: Բարձրանում է ամբոխը, փրփուրը բերանին հայհոյում, նզովում, խայտառակում է թշուառների անկիզճ բռնակալին: Ժողովուրդը, որի համար գնում էր Քրիստէն իր անձը, թքում էր իր Արարչի երեսին, ծաղրում, ծիծաղում էր նրա վրայ, ստեղծւածը ապտակ էր տալիս Ստեղծողին, նա զառել էր ծաղր, ծիծաղ, նախատինք: Բայց այդ բռնական չէր, ամբոխը չէր կշռադատ գրանով, պէտք է նրան խաչել, բևեռել անէծքի փայտի վրայ, պէտք է մարմնացած ճշմարտութիւնը սպանել և այն էլ երկու աւազակների մէջտեղ—սա էր նրա պահանջը, որոի վախճանը: Այդպէս էլ արաւ, բազմաչարչար տանջանքներով սպանեց նա երկնային բարձր խորհուրդների ճշմարիտ հեղինակին, չեղոյ թողեց հողում նրան, Որը իր ամբողջ էութեամբ միտք, գաղափար էր, գոյեց նրա վրայ մի մեծ քար, կնքեց այդ քարը, գրեց պահապանները որ հսկեն, սահմանափակեն, մեռցնեն ճշմարտութիւնը: Բայց այդ բանը կրքոտ ամբոխին և նրա կոյր հովիւներին չբաւեցրեց, առաւօտ շատ վաղ եկան կտնայք գերեզման, որտեղին Քրիստի և Ինչ պատահեան սատան.

—*Ո՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում. Նա յարութիւն առաւ:*

—Այո, նա յարութիւն առաւ, Նրա քարոզած մտքերը աւելի արծարծուեցին, ճշմարտութիւնը վառուեց, տարածուեց ամեն տեղ: Գնեցին, քարկոծեցին, խաչեցին մեծ մարգարէի հետեւորդ վկաներին, բայց պիմազրել, հեղեղի առաջը առնել չկարողացան և այսօր XIX դար անցնելուց յետոյ դեռ այդ հեղեղը անվրդով կերպով հոսում, պտղաբեր է անում աշխարհի ամեն մի ծայր, ամեն մի անկիւն:

ԳՈՉԳՈԹԱ

Եւ՝ ոմ է խաչւած ամբոխի ձեռքով
Որպէս աւազակ, որպէս մարդասպան,
Այն ճամ հառաչն է վերջին աղօթքով,
Որ բարձրանում է դէպ Սէրն անսահման:

Նա Քրիստոսն է... Հրէյից Որդին,
Սէճ Հիմնադիրը մեճ գաղափարի,
Նա՝ որ կեանք տրւեց մարդկային ազգին
Եւ ոդի շնչեց մի վեսմ մրւքի:
Գառն Հայաճանքը նա արհամարհեց
Եւ նախատական խաչին մրճաւեցաւ.
Յանուն փրկութեան նա կեանքը զոհեց,
Բայց բիւրտ խուժանը նրան չբհասկացաւ:

Նա Ի՛ուսուցանէը սուրբ ճշմարտութիւն,
Նա կրսերմանէը մի սէր փրկարար,
Որտեղ կաշխատէր պտնել փրկութիւն
Մեղքերով լցւած իր ազգի համար...

Բայց նա խաչւած է անարդ գերութեամբ,
Արիւն է հոսում նրա սուրբ ճակատից,
Փշրեալ սրտակը իր խուլ պատնութեամբ
Փաթթում է Նըրա ճակատն արնալից:

Եւ մթնէ այդպէս կըմնայ երկար
Սուրբ Առաքեալը այն խաչի վրայ,

Մթթէ ճշմարիտ լոյսը փրկարար
Ձըպճիք է մի օր քաջ Հանդիսանայ...

Մթթէ իր մտքին չըկայ յաղթանակ,
Մթթէ շուտ կըմնայ ծաղր ամենքին.
Յաղթութեան փառքով մի գափնէ պսակ
Ձըպճիք է փայլի այն սուրբ ճակատին:

Անցել են դարեր... փոշի է դարձել
Վերջին աճիւնը այն բիրտ խուժանի,
Բայց անարատ, սուրբ Ջոհի գլխին
Փայլում է արդէն յաղթութեան գափնի:

Նրա քարոզը, մխիքը փրրկարար
Հողի ստացաւ իր մահուան գընով.
Անհատոր գերու լոյսերն անհամար
Փառքով պսակեցին փրկութեան լուսով:

Եւ սարկացած աշխարհի Որդին
Չին Գողգոթայի անշուք գագաթից
Ահա թէ ինչի իր վերջին ժամին
Կարծես առում էր խաչի վրայից.

—«Ոչինչ չի ընկճում հատատուն մըտքին,
Տառքեր չի սպանում ահեղ Գողգոթան...
Երբ այնտեղ հնչէ քո ժամը վերջին
Գիտցիր որ խաչդ ունի պատանդան»...

ՊԵՏ. ՄՈՍՓՈՒԵԱՆՑ

ՄՈՒՐԱՅԻԿԸ

Հանիկը կույր ծնեց: Ոչ ոք մեղաւոր չէր պատճառ, թէև նա դժբախտ էր. կան մարդիկ, որոնց թշուառութեան համար որևէ մեկին մեղաւոր են ճանաչում, բայց ոչ, նրա կոյր ծընելու համար ոչ ոք մեղաւոր չէր. իսկ նա չէր էլ մտածում, որ կարող է մեկն իր թշուառութեան սկզբնապատճառ լինել և աշխատում էր չմտածել իր կուրութեան մասին, իրան համարում էր միւս արարածների նման. և լիարաւ, ինչ օգուտ, եթէ նա մտածէր և գտնէր պատճառները իրան և միւսների մէջ, չէ՞ որ հոգսերն էլ կրկրկնապատկուէին, չէ՞ որ նա կարող էր յանցաւոր երազների մէջ ընկնել... Նա կոյր էր, բայց այդ բոլորը չէ:

Երջանկութեանը երջանկութիւն է յաջորդում, թշուառութեանն էլ թշուառութիւն. մարդուս գլխին երբ լջնում է փորձանքը, նրա յետևից գալիս է և՛ մի ուրիշը և նրան դորձանում. կոյր էր նա և շուտով կատարելագործէս մենակ մնաց անհոգ աշխարհի երեսին, մենակ, կատարեալ մենակ...

Ո՞վ պէտք է նրան օգնէր դէթ լոկ խօսքով, ով գոնէ մի անտարբեր հայեացք կըգցէր անտէրի, անպաշտպանի վրայ: Նա ազօթում էր միայն, աստուած էր մարդին, աստուած էր ամեն բան, բայց երկինքը կար, որ նրան սիրելի էր, նա ամեն բան քար էր համարում, բայց երկնքումն էր իր լոյսերի, ըղձերի մարմնացումը, այնտեղից սպասում էր բարօրութիւն, նոր կեանք, թէև ոչինչ չէր ստանում իր ազօթքին վարձատրութիւն, թէև երկնքի դռներն էլ փակ էին նրա համար. այդ նա դիտէր, բայց յոյս ունէր, որ կարող է բանալ իր համեստ մրմունջներով և կրծքի տակ, այն վսքրիկ սրտիկում կսթկսթող արիւնով: Ի՞նչը կարող է աւելի սրտառուչ լինել, քան կոյր մանկան անմեղ խնդիրը, բայց ով էր նրանով վշտացողը. «Թող մեռնի, այսպէս էին ասում մարդիկ, ինչ հոգ, աշխարհը կազատուի մի անպէտք արարածից, մի ձրիակերից». այսպէս էին ասում, թէև նա տակաւին ոտք չէր կոխել ձրիակերութեան շէմքը:

Նրա մէջ զարթնել սկսեցին վաղուց ծնունդ առած երազները, նա դգաց նրանց ոչնչութիւնը. դգաց՝ որ թշուառ է, միւսների նման չէ, մտածեց՝ որ ինքն ստղէն մեռած է, որ աշխարհն իր անձուկ դերեզմանն է և սկսեց արտասուել դառը, վշտալի... Նրա համար կեանքը թոյն էր, բայց չէր կարող նրանից չըխմել, նա աւելի լաւ էր համարում խմել այդ թոյնը, քան թէ չըզգալ, չըլսել, ատչել, վտել, հոգ դառնալ, ցրտել, խաւնուել փոշու հետ, որ մի օր սև ձիաւորը գայ կոխոտի և երկինք բարձրացնի... Այն ժամանակ ով է իր մասին հոգացողը. բայց մթթէ այժմ շատ են ցաւակցում—ուրեմն նա թշուառ է իր սկզբնաւորութիւնից մինչև յաւիտեան:

Ահա պատից վերցնում է սաղը և սկսում է անվարժ ձեռներով անխոտոր զարկել թիւերին. նրանք ձայն են հանում, բայց վայրենի, աննեղպաշնակ, և կոյրը լալիս է. իր ծննդեան օրից նրան ոչինչ չէ հպատակել և չէ հպատակելու մինչև յաւիտեան, նոյն իսկ սազի անշունչ լարերը դատապարտում են իրան: Ա՞խ, թէ երկինքը նրան ձիրք շնորհէր, նա սկսէր նուագել այնպէս սահուն, մեղմիկ, քնքոյշ, սրտաշարժ, այն ժամանակ բոլորը նրան կըսիրէին. թէ կարողանար երկինքը նրան շնորհել մի հուր,



Դեռ խաւկ է. (Նկար Լինդենդմիթտի թոթագր. Մ. Վերկլի).

որով զօրութիւն ունենար խօսել տալ իր սազի լարերին, որ կարողանային նրանք երգել իր թշուառութիւնը, այն ժամանակ մարդիկ ցաւակից կըլինէին, նա կըդարձնէր նրանց սիրտը դիւթական, երկնային, քնքոյշ, դիւրազգայ և երջանիկ կըլինէր, երջանի՛կ... այո՛. այն ժամանակ ամբողջ տարրերքն իրան կըհպատակուէին... Բայց այդ բոլորը երազներ էին, որ նրա միտքը պղտորում, տակն ու վրայ էին անում, նա նոյնն էր և նոյնը:

Գնաց, նստեց պատի տակ. մտքերը նորից պաշարեցին. ինչպէս վանել նրանց, նրանք կըսպանեն մի օր, դերեզման կըտանեն իրան. իսկ ինքը ցանկանում է դեռ երկար, շա՜տ երկար ապրել: Խփում է կոյրը լարերին՝ մտքերը նրանց տակ ծածկելու համար, հատ-հատ ձայներ հանում, ոսկեայն նրանք չեն դարձեցնում մարդու խիղճը, բոլորը չար են, միայն բարին հրեշտակն է, որ թևերը լայն-լայն փռել է վրան և հանդարտութեամբ գրկում է կոյրի անտրտունջ հոգին...

ԱՐԶԱԿ ԱԹԱՅԵԱՆ

Ե Ր Ա Զ

Իշաւոր մի կամքով այս լարած
վորձանքում,
Երբ խեղդւում ենք արեան հեղեղի
չորձանքում,
Ո՞վ անուրջ, հրեշտէն բե՛ր ինձ նոր
սիրելի,
Աշխարհի ստեռնայ, ուր մարդը չէ
գերի:

Թող ինձ գէթ մի վայրկեան հրապոյր սրտատրոփ,
Որ այս զոյժն զալ բախտի աւետման է ամպրոպ,
Որ ծագող յոյսերի պըրսակ են ոգեանչեան
Արշալոյսն ծիրանի, ծիածանն թովչական.

Որ համաշխարհային մարդկան կեանքը մէկ օր
Իր նաւով պիտ ճեմէ այդ երկնում փառաւոր,
Ուր աստղերն են մտքի մարգարիտներ նոր-նոր.

Որ յաւէժ կըժպտայ նրան սէրը փափկատուն,
Որ ցընորք չէ բարբառն խմաստունի Հաստուն,
Որ դու էլ, լի՛մ երազ, չես մի վուշ վայնասուն:

* *

ԹԷՈՓՕՐԱ *)

Պատմական վէպ

IV

ՈՒՊՐԱՆՈՅ



Ուպրանո՛, Ուպրանո՛!—կանչում էին Հազարաւոր ձայներ Սարդիկայի վիճակամասի մի մեծ դիւղում՝ Տաուրեստայում, որից յետոյ առաջ եկաւ Բուլղարիայի այժմեան մայրաքաղաքը:

Սոֆիան մի փոքր, յարմարեցրած տեղ էր, հազուագիւտ պտուղով, խոր խոր ձորերով, վայրենի հարթաւէտներով, ուր թափառում էին եղջերաւոր անասուններն ու այծերը: Ողորմելի բնակարանները, ցախերով ծածկած, կաւով ծեփած, դաշտանի մորթի հագած՝ տղամարդկանց նախնական ու կանանց տնային հատ մահուդէ շրջազգեստների հետ:—Ուպրանո՛, Ուպրանո՛! աղաղակում էին ամենքը ձորի մէջ:—Ուպրանո՛! – արձագանք էին տալիս սարերն ու հարևան անտառները: Տարածած լուրը յուզել էր ամենքին: Կոստանդնուպոլից եկել էր սուրհանդակը, և որովհետև Խոտոնի կնոջ Բիզէնցիայի բնակարանը՝ յանձնից նրան պերգամենոը իր հերթից՝ այն միևնոյն Յուստինեանոսից, որը միաժամանակ դուրս գնաց տնից. հատարակ գինուր մուտ, հատ մինչև գնեռալոլթեան աստիճանը և կայսերական թիկնապահ գնդի հրամանատար նշանակուեցաւ:

Սուրհանդակի բերած նամակը տարան Բաղլեանց վանականների մօտ: Նրանք կարդալուց յետոյ առացին, որ Խոտոնի և Բէդլենցիայի Ուպրանո անունով որդին կանչւում է Կոստանդնուպոլիս: Ի՞նչպիսի բախտաւորութիւն: Ով գիտէ, գուցէ գեներալ Հօրեղբայրն է ուզում նրան աւելի տալ մարդկանց մէջ մտնելու: Ահա թէ ինչու ամենքը որոնում էին և կանչում Ուպրանոյին. նրանցից ամեն մէկը ինքն էր ուզում առաջինը յայտնել նրան հաճելի նորութիւնը: Բայց յայտնի չէր, թէ ուր էր նա գնացել ձուկ որսալու, միայն թէ աչքի առաջ ունենալով այն՝ որ նա իր հետ հացի փշրանքներ էր վերցրել, չէր կարելի յուսալ՝ թէ նա շուտով տուն կըվերադառնար: Մինչև անգամ ոչ ոք չէր նկատել թէ գէթ որ կողմ էր Ուպրանոն գնացել: Ուրբլիոնն, նրա փոքրիկ եղբայրը շտապեց բարձրանալ այն բարձր բլուրը, ուր Ուպրանոն սովորութիւն ունէր յաճախ գնալ, բայց այնտեղ էլ չէր նա: Ուրբլիոնն բարձրացաւ մինչև բլուրը—գտաւ նոյնը: Վերջապէս երրորդ բլրի կատարից նա տեսաւ եղբօրը:

*) Տես Տարազ № 9.

Ուլրանոզն կանաչ թփերով ծածկուած ափից ձգել էր ուռկանը, իսկ ինքը նստել էր քարի վրայ, ցնուած ձեռքին։ Դա մի երիտասարդ էր, դեղեցիկ և ուժեղ կազմուածքով։ Ուլրանոզն թէև մնծացել էր վայրենաբարոյ մարդկանց մէջ, այնու ամենայնիւ բնութիւնից օժտուել էր բարձր խելքով, արագ երեւակայութեամբ և մնծ հարցասիրութեամբ։ Յաճախ նա հեռանում էր հասարակութիւնից, որտնում էր խուլ վայրեր և այնտեղ խորասուզուում էր իրան շրջապատող բնութեան խորհրմասո զննութեան մէջ։ Նա հակում ունէր դէպի գործունէութիւնը, փառասէր էր և իր շրջապատողների մէջ իր ձգտումներով բաւականութիւն չէր գտնում։ Ուլրանոզն յաճախ իր հօրեղբօր բախտի մասին էր մտածում՝ որը մի հասարակ գեղջուկից մինչև գեներալութեան աստիճանը բարձրացաւ։ Ինքը Ուլրանոզն էլ զգում է իր մէջ ընդունակութիւն մի այլ դեր խաղալու համար. սակայն ինչպէս գալ այս գիւղական տղմի միջից։ Ապա ցնորամիտ երիտասարդը պատում էր այսպէս.—Ի՞նչու գեներալ հօրեղբայրը բերել չէ տալիս իր մօտ իր եղբօր որդուն, ինչու չէ հանում այս վայրենի շրջանից և միջոց տալիս, որ նա էլ կարողանայ ցոյց տալ իր ոյժերը հասարակական կամ արքունական գործունէութեան առաջարիզում։ Այդպիսի մտքեր էին ծնունդ առնում երիտասարդի գլխի մէջ և նրա հանգստութիւնը վրդովում։ Հազար անգամ նա ուղեց ուղևորուել դէպի Կոստանդնուպոլիս՝ սակայն մայրը պահում էր նրան, ասելով՝ որ նա այդպիսի վարմունքով հօրեղբօր բարկութիւնն իր դէմ կըզրդռէ։ Նա ապաստում էր, որ հօրեղբայրն ինքը կրհասկանայ այդ բանը և բերել կըտայ նրան մայրաքաղաք. սակայն անցնում էին օրեր, ամիսներ, տարիներ, հօրեղբօր կողմից հրաւէր դարձեալ չըկար ու չըկար։

Փառասէր երիտասարդին սաստիկ վշտացնում ու զայրացնում էր այդ մոռացութիւնը, և նրա բնաւորութիւնը հետզհետէ աւելի ու աւելի էր դառնում խիստ, կենդրոնացած, այնպէս որ նա վերջնականապէս սկսեց խուսափել մարդկանց հասարակութիւնից։ Չնայած կաղնու ստւերի տակ, քարի վրայ նստած Ուլրանոզն մտածում էր. այս սարերի ետևում ձրգուում են այլ սարեր, իսկ ոչն կողմը՝ ծովի ափին փառաւ է ոսկեզէն, հրաշալի քաղաքը, բոլոր քաղաքների թագաւորը։ Այնտեղ կայ կեանք, գործունէութիւն։ Օ՜ո, Կոստանդնուպոլիս, հարիւր հազարանոց մարդիկ են բնակեցնում իրանց մէջ քո փողոցները, ապարանքները, պարտէզները, հրճուում են քո փառքով, օգտուում են քո վայելքներով և հարստանում են քո գանձերով։ Իսկ խեղճ Ուլրանոզն դատապարտած է իր ոգորմելի գոյութիւնը քաշ տալու այս վայրենի հովտում, ժամանակը մխակերով վարելու անօգուտ, անմիտ, ձանձրալի։—Այն ինչ,—զատում էր Ուլրանոզն,—ես կրծքիս մէջ զգում եմ անյաղթելի ոյժ, ընդունակութիւն մի այլ կեանքի համար, աւելի լաւ գործունէութեան համար։ Ես միայն խնդրում եմ. Թող բախտը լինի ժպտայ, և աշխարհը իմս կըդառնայ։

—Ուլրանոզ! Ուլրանոզ!—այդ բարձրին մէկը կանչեց։ Ուլրանոզն յետ նայեց և տեսաւ բլրի վրայից վազող իր փոքր եղբօրը։

—Ի՞նչ է պատահել,—հարցրեց նա ոտքի կանգնելով։

—Մի հաճելի նորութիւն,—գոչեց եղբայրը,—հօրեղբայրը քեզ պահանջել է Կոստանդնուպոլիս։

Ուլրանոզն մի րոպէ չէր հաւատում իր լսածներին, ապա կարծես թէ քնից զարթնելով, նրա դէմքը պարզուեց. նա ուրախացած, աչքերը դէպի երկինք վերամբարձած՝ բռնեց եղբօրը, գրկեց նրան, համբուրեց, և շտապ քայլերով տուն գնաց։ Այնտեղ նա գտաւ ուղարկուած սուլհանդակին, որը հաստատեց ուրախալի նորութիւնը։ Ուլրանոզն ուզում էր իսկոյնևեթ ճանապարհ ընկնել, բայց սուլհանդակը պէտք է հանգստանար, ուստի գնալը յետաձգեցին մինչև յաջորդ օրը։

Ամենքն ուրախացել էին երիտասարդի բախտաւորութեան համար, միայն նրա մայրը—Եկատերինան, տխուր էր, թէև նա հաւատացած էր, որ որդուն սպասում են փառք ու պատիւներ. սակայն պատն անջատումն իր թանկագին որդուց՝ թունաւորում էր այդ մտքերը։ Այնուամենայնիւ Եկատերինան աշխատում էր արտաքները տակից ժպտալ։

—Մի տխրիլ, մայր իմ,—մխիթարում էր նրան որդին։—Երդում եմ քեզ, որ դու կըտեսնես որդուդ փառքի գագաթնակէտին հասած։ Ուլրանոզի գնալու նախորդ գիշերը, ոչ մէկը չէր քնում, ամբողջ ընտանիքը կրակարանի շուրջը ժողովուած, կիսաձայն քննաւատում էին Ուլրանոզի ապագայ հաւրիւրը։ Կատարանում էին օգտին ամրոցներ և անիրագործելի ծրագիրներ։ Ընտանիքը յոյս ունէր, որ Ուլրանոզն բարձրանալով՝ հոգ կըտանէ և իրանց վիճակի մասին։ Ուլրանոզն, հասկանալի է, յուզուած էր ամենքից աւելի, և հաւատացնում էր տանեցիներին, որ հոգ կըտանէ նրանց վիճակը բարելաւելու, երբ ոյժ կ'ունենայ, իսկ որ նա ոյժ կ'ունենայ, այդ մասին Ուլրանոզն ոչ մի րոպէ չէր կասկածում։

Յաջորդ օրը՝ առաւօտեան Ուլրանոզն ճանապարհ ընկաւ մօր օրհնութիւնների և նրան ճանապարհ դնող գիւղացիների, ամբոխի բարեմաղթութիւնների ուղեկցութեամբ։ Նրա ձին շատ վատ էր—տեղական ցեղից, բայց Ուլրանոզն մտադիր էր նրան փոխել, լաւն առնել, և հարկէ, մի յարմար վերադիր վճարելով։ Փառասէր երիտասարդին ուղեկցողների մէջ, ամենից աւելի, և հարկէ, իր հարազատ մայրն էր տիրում։ Չէնց որ որդին ծածկուեց նրա աչքերից, նա ազատութիւն տուաւ իր վշտերին ու ասաց.

—Սիրելի Ուլրանոզ! Դու ժպտալէմ Թողիր ընտանի յարկդ, տա Աստուած, որ քո արտասուքը լինի առանց արտասուքի։

Մինչ այս, Ուլրանոզն և նրան ուղեկցող կա-

Խռովիչ ալիքների մեջ.

բախտաւոր զամբիւղավաճառ.

ռապանը առաջ էին գնում: Կէսօրին նրանք իջևանեցին լեռների հովիտներից մէկում, հանդստացան և կերակրեցին ձիաներին: Երեկոյեան դէմ նրանք հասան լերան կողերին և գիշերեցին հովիւ վրանում: Մէս օրը կէսօրւան դէմ էր, արևը պայծառ փայլում էր, լուսաւորելով շրջակայ բոլոր տեղերը: Երբ գագաթին հասնելով՝ ճանապարհորդների հայեացքների առաջ պատկերացաւ Ծաղկաղարդ հովիտը, որի ծայրին կապուտին էր տալիս ծովը: Անտիմո սուրհանդակը կանգնեցրեց ձին և դառնալով Ուլրանդօլին՝ ասաց.

—Նայիր այնտեղ, հեռուն, տեսնո՞ւմ ես: Դա Կոստանդնուպոլիսն է:

Միջօրեան արևը իր շողերով լուսազարդել էր Բիւզանդիայի ահագին մայրաքաղաքի ոսկեգէն գմբէթները. ամեն կողմից քաղաքը շրջապատող ջրերը աւելի հսկայական պատկեր էին ներկայացնում:

Ուլրանդօն յուզմունքից շառագունեց:

Շուռ ամեն մի քայլից յետոյ դեղատես քաղաքի *պանորամը* աւելի ու աւելի էր պայծառ երևում, և երիտասարդ *կարիէրիստի* սիրտը արագութեամբ էր բաբախում: Վերջապէս նրանք մօտեցան Կոստանդնուպոլսին: Անտիմո սուրհանդակը առաջնորդեց երիտասարդ դիւղացուն ուղղակի պէպի իր հօրեղբօր՝ Յուստինոս դեներալի ապարանքը:

Հօրեղբայրը շատ լաւ ընդունեց Ուլրանդօյին. նա գրկեց նրան, համբուրեց և գննեց ամենայն կողմից:

—Կեցցես, իմ թանկագին Ուլրանդօ!—ասում էր ժպտալով ծերը:—Իրաւ որ դու այնպէս քաջ ես, ինչպէս ես քեզ երևակայում էի, հսկայակազմ ես ու զօրեղ՝ ինչպէս և ես, երբ քո հասակումդ էի: Ինձ պէտք է քո օգնութիւնը, իմ սիրելիս, ահա դրա համար էլ ես քեզ կանչել եմ,—շարունակեց հօրեղբայրը:—Տեսնո՞ւմ ես, ես մտադիր եմ մի մեծ բանի ձեռնարկել, ինձ հարկաւոր է մի հաւատարիմ մարդ: Թէև ես ինձ զգում եմ բաւականին առոյգ և, իմ հասակին նայելով բաւականաչափ ամուր կազմւածք ունիմ, այնուամենայնիւ ես արդէն ծեր եմ և իմ մէջ չքնայ ահա այն ոյժը, ինչ որ քո մէջ կայ, այն է՝ *էնէրգիա* և երիտասարդական հուր: Ես և դու միասին մեծ գործեր կրկատարենք: Զգո՞ւմ ես դու, աչկօք, քո մէջ համապատասխանութիւն ամեն մի *ոիսկի* համար:

—Այո, հօրեղբայր, զգում եմ:

—Լաւ, ուրեմն: Բայց նայե և առաջ, իմ սիրելիս, քեզ անհրաժեշտ է դէնք լաւ գործածելը սովորել, ապա հոգ տանել քո արտաքինիդ մասին. խուզել մազերդ, մօրուքդ, հագուստդ փոխել, նոյնպէս և «Ուլրանդօ» անունդ յոյների քնքշացած լսելիքին կարող է տգեղահնչիւն թւալ, մենք նրան «Յուստինեանոս» կըփոխենք, որ գիտնականների լեզուով դարձեալ նոյնն է: Յետոյ քեզ կը յանձնեմ Թէօֆիլ լաւ ուսուցչին: Դու քո բոլոր ոյժերդ պէտք է դործադրես, որպէս զի լաւ կարողանաս օգտուել նրա դասերից:

Այսպէս նախապատրաստեց ծեր դեներալը իր զաւառացի եղբօրորդուն պալատական ծառայութեան համար: Երիտասարդը բառացի կատարում էր փոխառու պալատականի խորհուրդները: Խուզեց մազերը, հաւասարացրեց միրուքը, ինչպէս առհասարակ ընդունած էր և մի լաւ դերձակի յանձնարարեց իր համար կարել հագուստներ: Պալատմունքներն էլ շատ յաջող էին ընթանում: Չանճարիղ Թէօֆիլի համար երիտասարդ զաւառացուն ուսուցանելը մի առանձին դժւարութիւն չէր: Ուլրանդօն՝ Յուստինեանոս դառնալով, եռանդով անձնատուր եղաւ. դրագիտութեան և ընթերցանութեան: Չէր անցել մի տարի, բայց նա արդէն կարդալ ու գրելը լաւ սովորել էր: Իսկ յետոյ լրացրեց հռետորութեան և փիլիսոփայութեան սկզբունքները: Դրա հետ զուգընթացաբար ծեր զօրապետը ծանօթացնում էր նրան ռազմագիտութեան գաղտնիքի, ներքին և արտաքին քաղաքականութեան հետ: Ընդհանրապէս՝ Յուստինեանոսը դիտութեան մէջ զարմանալի յառաջդիմութիւն էր ցոյց տալիս:

Մի անգամ, երբ երիտասարդը պարապում էր իր պրոֆէսսօրի հետ, դասարանական սենեակը մտաւ նրա ծեր հօրեղբայրը, բռնեց նրա ձեռքից և գոչեց.

—Այժմ պարապելու ժամանակ չէ, դնանք Յուստինեանոս, գործելու ժամանակը հասաւ:

Զօրապետը, ապշած երիտասարդի թևից բռնած, համարեա, քաշ տւաւ կայսերական *ապարատամ՛էնտ*ի միջից, որտեղ կատարեալ քաոս էր թագաւորում: Ամեն կողմից վազվզում էին պալատականներն ու զարդիականները, ծառաները կողոպտում էին լինչքն ու զոյքերը: Ներքինիները, պատրիկները, սենատորները արտասանում էին այլ և այլ անկապ խօսքեր: Ամեն տեղ տիրում էր անկարգութիւն, ամենքը փախչում էին շփոթւած, հարցնում էին և պատասխան չըստացած, նորից դէպի մի կողմ էին վազում: Այդ բոլորին միացել էր ահեղ վոլթորիկը և որոշ անընդհատ շառաչիւնը: Մի խօսքով, կարծես հասել էր վերջին զատաստանի օրը:

Յուստինեանոսը բոլորովին կորցրել էր իրան, նա չըգիտէր, թէ ինչ անէր: Վերջապէս հօրեղբայրը յայտնեց նրան ընդհանուր յուզմունքի իսկական պատճառը:

—Անատասը մեռաւ,—ասաց նա,—գւարդիան ինձ կայսր հրատարակեց, մենք պէտք է հաստատակամ և աներկիւղ լինենք, ապա թէ ոչ՝ կորած ենք:

Արդարև դա մի սարսափելի ձգնաժամ էր, և նրա համար աւելի սարսափելի էր, որ դրան պիտւորելու համար ոչ ոք չէր նախապատրաստւած: Զառւամեայ Անաստասը, որ վաղուց արդէն տկար էր, յանկարծակի մեռաւ, կարծես կայծակնահար եղած: Կայսեր յանկարծահաս մահւան պատճառով պալատում իրարանցում ընկաւ: Գահի ձգտող բոլոր կուսակցութիւնները էլ կորցրին նախատեսնելու ընդունակութիւնը: Գւարդիականները այդ բանից օգուտ քաղելով իրանց գլխաւորին կայսր հրատարակեցին: Ամանցիս ներքինին, երբ գրամական ահագին գումարը ծեր դեներալի տրամադրութեան տակ դրեց

զինուրներին բաժանելու համար, որպէս զի այս վերջիններս Թէօկրլիտ պատրիկին ձայն տան, Յուստինեանոսը հասկացաւ, թէ ինչ մեծ դեր է խաղում կաշառքը ընտրութեան գործում, և փոխանակ աշխատելու Թէօկրլիտի օգտին, իր օգտին աշխատեց: Դրամները բաժանեցաւ զինուրներին այն պատճառով, որ նրանք ձայն տան ոչ թէ Թէօկրլիտին, այլ Յուստինեանոսին: Գիներալը, այդպիսի մի՛ վճռական և կարևոր քայլ անելով, անհրաժեշտ էր համարում

—Կալանաւորել այդ դաւաճանին,—գոչեց նորընտիր կայսր մատնացոյց անելով Ամանցիոյին:

իր մօտ ունենալ կատարելապէս անձնանուէր մի մարդ: Ահա հէնց այդ պատճառով էլ իր մօտ բերել տուաւ իր եղբօրորդուն—Ուպրանդոյին: Այժմ ահա հասել է վճռորոշման կուռ ժամանակը, որից դուրս գալու ելքը կարող էր երկուսը լինել, կամ բարձրացնել գլուխը ամենքից վեր, կամ թէ խոնարհել նրան, կոձղի վրայ գահի առաջ:

Սակայն ձեր ընտրիպանը և երևոյթասիրող վարպետը յաջողութիւն ունեցան: Գեներալի և ուրիշ գնդերի գնդապետները շրջապատեցին գեներալին և «կեցցէ՛ Յուստին կայսրը»: Գոչիւնները դղրդեցրին պալատի կամարները:

Միւս բոլոր պաշտօնեաները տոկալած էին իրանց յաղթած համարել: Ամանցիս ներքինին շփոթած Յուստինի մօտ վազեց և ուզում էր բան ասել, բայց չըկարողացաւ:

—Կալանաւորել այդ դաւաճանին!—գոչեց նորընտիր կայսրը մատնացոյց անելով Ամանցիոյին:

Յուստինեանոսը ներքինու վրայ արձակւեց, բռնեց նրա մազերից և հրամայեց զինուրներին տանել ստորերկրեայ բանտը: Ներքինու կալանաւորութիւնից քիչ յետոյ յայտնեցաւ և պճնազարդուած Թէօկրլիտը. նա հաւատացած էր, որ իրան են ընտրել: Ազնաշուք պատրիկն էլ նոյն վիճակին արժանացաւ, նրան էլ բանտ նետացրին: Դրանից յետոյ Յուստինի ընտրութիւնը ոչ մի արգելքի արդէն չըհանդիպեց: Գւարդիականների խլացուցիչ աղմուկներին շուտով միացան ժողովրդի ցնծութեան ձայները: Սէնատորները տեսնելով, որ արդէն ամեն բան վերջացել է, ընդունեցին նոր կայսերը: Սկսեցան խոնարհ ողջոյնները, շնորհաւորութիւնները, գոհութեան և անդաւաճան հպատակութեան խօսքերը:

Փոքր ինչ յետոյ, գեներալները ձեռքների վրայ բարձրացրին Յուստինին և պատւաւոր դինախմբի ուղեկցութեամբ տարան գահական դահլիճը, որի գմբէթը աւելի բարձր էր քան սուրբ Սոֆիայինը:

Նորընտիր կայսրը հանդիսաւոր կերպով նստեց թանկագին քարերով զարդարուած գահի վրայ, նրա ուսերին ձգած էր արքայական պատմուճանը, գլխին պրած թագ, իսկ ձեռքին բռնել էր սկիպետր (գաւազան): Դրօշակակիրները խոնարհում էին դրօշակները կայսեր առաջ, եպիսկոպոսները հոգևորականութեան հետ և գլխաւոր պաշտօնական անձինք, պալատականները նոյնպէս խոնարհ գլուխ էին տալիս: Ժողովուրդը ցնծութեամբ ողջունում էր Յուստինին, համարեա թէ աստւածային յարգանքներով մեծարելով նրան:

Միևնոյն ժամանակ գիւղացին հպարտութեամբ էր նայում իր ոսկեայ գահոյքի բարձրութիւնից իրան երկրպագող ժողովրդի այդ խուռն բազմութեան և նրա սիրտը բերկրութեամբ թնդում էր: Նա գարձել էր կայսր, ցեզար, օգոստափառ:

Երիտասարդ գիւղացի Ուպրանդոն գահոյքի պատւանդանի մօտ կանգնած, իր հօրեղբօր այդ բարձրութեան մէջ տեսնում էր իր ապագայ բախտը:

---

2 (Կըշարունակի)

Մեր վարչ ու բարեբերից

Հյուսուրակչական Ընկերութեան ընդհանուր ժողովում անցեալ կիրակի տեղի ունեցաւ մի տխուր իրողութիւն, որ մի անգամ եւս ապացուցեց, թէ որքան մենք դեռ կոպիտ եւ անքաղաքավարի ենք դէպի այնպիսի արժանաւոր եւ պատուաւելի մարդիկ, որոնց անունները պատաւոր ենք միշտ յարգանքով յիշել։ Ընկերութեան գործունէութեան մասին եղած վիճաբանութիւնների ժամանակ, ի միջի այլոց, մի քանի բացատրութիւններ տուին ընկեր. խմբագրական մասնաժողովի անդամներից մէկը, իր զրպանից գործելով եւ համեստութեամբ ամենքի յարգանքը վայելող պ. Լունկևիչը։ Մեր բազմաշխատ եւ պատկառելի հեղինակ Պուշեանցը խնդրեց պ. նախագահին կրկնել պ. Լունկևիչի տուած բացատրութիւնը։ Կարծում ենք, որ յարգելի վիպասանի այդ պահանջը ոչինչ վիրաւորական բան չէր կարող պարունակել իր մէջ։ Պ. Լունկևիչը իրրև կրթուած եւ զարգացած մարդ, ի հարկէ, ինքը ոչ միայն չվիրաւորուեց, այլեւ ուրախութեամբ յանձն առաւ կրկնել իր բացատրութիւնը։ Ինչն լաւ ինքեան այդ մի սովորական դէպք է, որ միշտ եւ ամեն ժողովում պատահում է։ Բայց դրանից էլ այնպիսի անկոչ վիպասաններ, որ կամեցան անպատճառ պ. Պուշեանցի պահանջը Լունկևիչի համար վիրաւորական ցոյց տալ։ Այդ պատճառներից մէկը, մի պ. Գ.-ն, որի անունը ոչ զրականութեան մէջ կայ եւ ոչ հասարակութեան մէջ է յայտնի, թոյլ տուեց իրան մի յանդիմանական ճառ ասել Պուշեանցի դէմ, մի այնպիսի անձնաւորութեան դէմ, որի անունը յիշելիս՝ Գ-ները պարտաւոր են իրանց գլխարկը հանել։ Եւ այդ, չընայելով պ. նախագահի հակառակելուն, պանդահարութեան եւ ժողովականներից շատերի շշուկներին։ Կարծում ենք, որ ոչ պ. Լունկևիչն էլ կարծր այդ տեսակ վիպասանների օդնութեան եւ ոչ մանաւանդ պ. Պուշեանցի ակնդիրներին կարող է հասնել այդ տեսակ մարդկանց յանդիմանութիւնը։ Ե՞րբ, վերջապէս, պէտք է յանդգնութիւնը դադարի այդքան աներեսաբար արտայայտուել, ե՞րբ պէտք է հայերը սովորեն յարգանքով վերաբերուել դէպի իրանց պատուաւելի գործիչները։

ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Անցեալ կիրակի քաղ. խորհրդարանի դահլիճում կայացաւ Հրատ. Ընկ. Ընդհ. ժողովը պ. Աւ. Արասխանեացի նախագահութեամբ։

Մի տխուր սովորութիւն կայ մեր ընկերութիւնների ժողովներում. խօսում են շատերը, միմիայն կարծէք խօսած լինելու համար։ Եւ մեծ մասամբ միշտ խօսողները նրանք են, որոնք գործի մէջ աւելի քիչ շնորհք, հասկացողութիւն և տաղանդ են ցոյց տալիս, իսկ գործատանձնելուց ափշակարաչ երևան են հանում իրանց արդիւտութիւնը և անկարողութիւնը։

Հրատարչ. Ընկ. Վարչութիւնը անցեալ 95 թ. համար մի շատ ընդարձակ տեղեկագիր էր հրատարակել։ Գործին տեղեակը բացի անկեղծ շնորհակալութիւնից, ոչինչ տալիք չէր կարող ունենալ։ Սակայն պտնեցին մարդիկ, որոնք մի քանի ժամ զբաղեցրին ժողովականներին իրանց անտեղի վիճաբանութիւններով։

Հրատարակչ. Ընկ. ֆինանսական, բանկային մի հաստատութիւն չէ և անվայել էր ընկերութեան կասսի մասին այնքան խօսել, մանաւանդ որ բոլորիքեանք էլ համոզուած են նրա շատ լանամքով պահելու և ապահով լինելու մասին, և գիտեն, որ մի գրօշ անգամ չի ծախսուում աւելորդ տեղը։

Այս ժողովը գլխաւորապէս պիտի զբաղուէր ընկերութեան հրատարակելի գրքերի բովանդակութեան մասին վիճաբանութիւններով։ Սակայն ժողովը այդ մասին տարաբախտաբար ոչ մի որոշ եզրակացութեան չեկաւ։

Մեր կարծիքով, այժմ ժամանակ է, որ ընկերութիւնը հրատարակի մի շարք ինքնուրոյն գրքեր, ժողովրդի և մանուկների համար։ Պ.պ. Ղազյեան, Պուշեան, Ձիրվանզադէ, Լէօ, Մուրացան պէտք է հրաւիրուեն աշխատակցելու։

Ժողովը փակուեց կէս գիշերից կէս ժամ անց։ Ընտրուեցին Վարչ. անդամներ՝ պ.պ. Գր. Վարդանեան, Արշ. Տէր-Գրիգորեան (գանձապահ), Կ. Գիւլնազարեանց (քարտուղար)։

Խմբագր. մասնաժողովի անդամներ՝ պ.պ. Լ. Մանուէլեան, Ստ. Մալխասեան, Յ. Քոչարեան, Աւ. Հաբեխոնեան, Աւ. Սարուխանեան, Ստ. Լիսիցեան։

Մատենախօսութիւն

ՁԻՐԱԿԻ ԼԵԳԵՆԴԱՆԵՐԻՑ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ, Յովհ. Կոստանեանցի, Ալէքսանդրապոլ.

Ձատ կան մեզանում ոտանաւոր գրողներ, բայց նրանցից շատ քչերն ունեն փոքր ի շատէ բանաստեղծական ձիրք։ Պ. Կոստանեանցը պատկանում է այդ քչերի շարքին, ապացոյց քառատուերք մեծ և փոքր ոտանաւորներից բաղկացած այս գրքոյկը։ Հեղինակը, ինչպէս բուն ժողովրդի զաւակ, ծանօթ նրա ցաւերին և ուրախութիւններին, մեծ մասամբ նրա կեանքի երևոյթներն է նկատում։ Ունենց վերացական և բարձր քնարերգակի ձգտումներ ունենալու, նա բանաստեղծական ոտանաւորներով ծանօթացնում է մեզ հայ ժողովրդի առանդութիւնների հետ, և դա փոքր գործ չէ։ Տարազի և Ազբիւրի ընթերցողները վաղուց են ծանօթ պ. Կոստանեանցի գրչին, և գրքոյկի մէջ տպուած ոտանաւորների մեծ մասը առաջինը մենք ենք հրատարակել։

Առանձին հաճոյքով կարդացուում են հետևեալ ոտանաւորները. «Արփաչալի ալիքները», «Կոյր աշուղը», «Հայդուկը», «Անկոչ աբեղան» և «Վանայ բերդը»։ Կան և՝ անաջող ոտանաւորներ, ինչպէս «Հայրիկը գաղթականների հետ», «Երաշտ» և այլն, բայց այդ անաջողութիւնը, ի հարկէ, չի կարող նսեմացնել նոր ոկսող երիտասարդ հեղինակի բանաստեղծական շնորհքը, որ անվիճելի է։ Ցանկալի է միայն, որ բանաստեղծը աւելի պարզ

և հասկանալի դարձնի իր ոճը, խոյս տալով մթութիւններից։ Գրքոյկի մէջ պատահում են այդպիսի տողեր.

Հարաւ կողմից ամպ է գալիս,
Ամպ է գալիս,—տերև դողում,
Խփուելով է զանգակ-ծաղիկ,
Աքաղաղն էլ շատ է կանչում։
(եր. 11)

—

Ահեղ քաջը ոսկորներով լափում է
ողջ ոչխարը,
Յետոյ կրկին վեր են քաշում, որ
չմանայ աշխարհը։
(եր. 62)

Լաւ կլինէր, որ պ. Կոստանեանց ուշք դարձնէր և համեմատութիւնների վրայ, որ բաւական աղքատ են նրա ոտանաւորների մէջ և որ կպժում են բանաստեղծի դիւաւոր արժանաւորութիւններից մինը։

Գրքոյկը տպուած է շատ մաքուր, տպագրական սխալներ չընկատեցինք նրա մէջ։ Գրքոյկի գինն է 30 կոպ.

—

Մոսկւայում այս օրերս լոյս է տեսել մեր երիտասարդ դիւանական Լազարեան ճեմարանի պրոֆէսսոր Գրիգոր Խալաթեանի մի նոր աշխատութիւնը ռուսերէն լեզուով «Армянскій эпосъ въ исторіи Арменіи Моисея Хоренскаго».

Այս ահագին դիւանական աշխատութիւնը, որ բաղկացած է աւելի քան 400 մեծադիր էջերից, ներկայացնում է Խորենացու պատմութեան մանրամասն քննութիւնը։ Դա ամբողջ քննութեան առաջին հատորն է, իսկ երկրորդ և վերջին հատորը լոյս կտեսնի յետոյ։ Հեղինակը տպագուցնում է, որ Խորենացու պատմութիւնը դրած է ոչ թէ հինգերորդ, այլ ութերորդ դարում։ Անշուշտ, այս հսկայական աշխատութիւնը մի նոր յեղաշրջում կըմտցնի Խորենացուն վերաբերեալ գրականութեան մէջ։ Մենք կաշխատենք մեր ընթերցողներին աւելի մանրամասն ծանօթացնել եռանդուն դիւանականի հետազօտութեան հետ։ Գիրքը տպուած է Մոսկւայում շքեղ թղթի վրայ և արժէ 3 րուբլի։ Յանկացողները կարող են դիմել հեղինակին, Լազարեան ճեմարան։

—

Մանկական գրադարան, ,,Երեմ կատուի պատմութիւն'' և ,,Կարմիր գլուխ'', հրատարակութիւն իշխանուհի Մ. Թումանեանի, 1896 թ.

Այս երկու մանկական գրքոյկները գնահատելի են այն տեսակէտից, որ մեզանում, դժբախտաբար, առհասարակ շատ քիչ ուշադրութիւն է դարձրած մանկական գրականութեան գարգացման վրայ։ Այն ինչ, չըպիտի միայն ծնող լինել զգալու համար այդ խոշոր թերութիւնը մեր գրականութեան մէջ։ Իշխ. Թումանեանի գրքոյկները լրանց բովանդակութեամբ մանուկների ընթերցանութեան համար գեղեցիկ գործեր են, և մենք ամենայն վստահութեամբ այս փոքրիկ գրոյցները, որ ընդհանուր առմամբ սիրուն թարգմանութիւններ են, առաջարկում ենք հայ ծնողների ուշադրութեանը։ Գրքոյկների լեզուն բաւական սահուն է և մատչելի մանուկների հասկացողութեանը, թէև, ի հարկէ, վերջ չէ բանի մի աննշան թերութիւններից։ Արտաքինի կողմից գրքոյկները գեղեցիկ են, տառերը խոշոր և թուղթը բաւական շքեղ, տառասխալներ չըկան։ Գալով նկարներին, եթէ ի նկատի առնենք այն ահագին դժուարութիւնը, որին հանդիպում է Թիֆլիսում նոյն իսկ մի աննշան նկարչ լոյս ընծայելը, ընդհանրապէս յաջողած պէտք է համարել իշխանուհու գրքոյկների մէջ։ Իւրաքանչիւր գրքոյկ արժէ 20 կոպ.

—

ՓԵԼԻՔՏՕՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Ընարհատուր Զատիկ։ Պատիւ ունեմ յայտնել ի պիտութիւն Համայն աշխարհի, որ այսօր քաղաքացին փոստով ուղարկեցի հետևեալ հիմնարկութիւններին և անձանց գատական ձևեր, բան հին հայկական սովորութեան, նախշած հետևեալ խորագրերով.

ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ

Արագիլի ձու, մէջը գատարկ.—«Ներող գատարկ, փորդ ուռած, ներսդ քեզ է այրում, դուրսը թըշնամուդ։

ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐ.

Կանանչ ներկած ադամանդ ձու.—«Պատիկ ես, բայց չատիկ, թէկուզ ճաքեն, թէկուզ տրաքեն, դուրսը որ չըզարնես, տանը միշտ պիտի կաքաւես, կօշիկներդ էլ որ հնանան, ոտքատներին շալրտես»։

ՍՕԼՕԼԱԿԻ ՁՐԻ ՁԱՆԱՐԱՆԻՆ

Անպակաս լինին Աստուածածինն Մարիամի նման ձեզ կարմիր ձևեր բաժանող Մարիամներ և նրանց էլ չըպակասին Աստուածածնին սեփուկ բերող Յովհաննէս սեհոտարանչի նման Յովհաննէսներ։

ՕՐ. ՅՈՒՍՏԵԱՆԻ ՊԱՊԱՅԵԱՆԻՆ

Ի՞նչ կանեմ ոսկի սափորը, որ նրա մէջ արիւն պիտի թգքեմ։

ՕՐԻՈՐԻ ՅՈՒՍԻԿԵԱՆԻՆ

Բազամէսի նամակները։

ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՆ

Իր բնեհիւսներին միշտ մարդ շատ։

ՉԱՅ ՉԵՂԻՆԱԿՆԵՐ ԿԱՐԴԱՑՈՂԻՆ

Խենթ, Զահլուամար, Նամուս։

ԲԱԶԿՈՊԵՏ Ե. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻՆ

Աւազջուրիւն։

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ

Մի հատ ձու գեղին ներկած.—«Քաշ մի ուռչիլ»։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՊԱԳԱՅ ՖՕՆԴԻՆ

Մի անեղևոյթ ձու. «Քենը, դեռ ապամայ մոթի է»...

«ՄՈՒՐՃԻՆ»

Մի հատ ծակ ձու—0.—«Թող այդ ծակ ձուն բաժանորդներիդ թուին ավելանայ»։

«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ»

Մի հատ օձի ձու—մանուշակագոյն ներկած.—«Էֆ լօթի»...

«ՄՃԱԿԻՆ»

Մի քարի ձու—կարմիր ներկած.—«Անըմմրդ կայ, ամանըմըդ չըկայ, քեզ հետ էլ հոգ ղաթաղ հաղ կանի, որ լմանան ձուդ պեղած ա»։

«ՏԱՐԱՋԻՆ»

Մի հատ հաւի ձու—դեռ չըներկած. «Ցեսուր, դէհ, ճանապէր կրծքիդ տաքացրած օձերին»։

«ԱՂԲԻՒՐԻՆ»

Մի հատ սիրուն նախշած ձու. «Ակռանքդ անպզոտ»...

—

Առանց ծանրի. Ճանապարհածախս չանելու պատճառով:

«ՄՇԱԿ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Տարեկան 365 №№, Թրիզոլ Արծրունու «Մշակ»:

«ՄՈՒՐՃԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Ձեզ աւետիք, Մուրճը լոյս տեսաւ:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

«Արձագանքի» միշտ անսկսել տարեայ նման հոմարներ:

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՄԲԻՆ

«Ընտանեկան վոլթորիկ», «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք»:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ջնորհաւոր Զատիկ:

Սիկուլի

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն,

Երաժշտագէտ պ. Եկմալեան, որի մասին դեռ անցեալ տարի, երբ Նրան հալածում էին Թիֆլիսում և կասկած յայտնողներ կային Նրա հրաժշտական հմտութեան մասին, մենք մեր կարծիքը հակառակ հոսանքի յայտնեցինք, նրա մէջ դտնելով լաւ տեխնիկա, իր գործին հմուտ և հասկացող Պ. Եկմալեան չըվհատեց և չարհամարհեց Կովկասի երաժշտական հասարակութիւնը, այլ ընդհակառակը, գործին սիրահարի յատուկ համբերութեամբ նա սոխպեց այսօր իր հակառակորդներին խոստովանելու իր երաժշտական հմտութիւնը:

Պ. Եկմալեան ս. Էջմիածնայ սան է և այսօր նա ամենայն երախտապիտութեամբ ընծայաբերում է մայր եկեղեցուն իր թանկագին առհաւատչեան: Պատարագի երգեցողութիւնը նա վերածել է արդէն եւրոպական բառաձայն նօտաների, պահպանելով հայկական ոգին: Ունկնդիրները մեծ սիրոյանք են գտնում նրա խմբի երգեցողութիւնը լսելիս: Պ. Եկմալեանի «Հայր մերը»՝ այն հայր, որ չի լսել Թիֆլիսում, կարող է չիրաւի ցաւ և կորուստ համարել: Հայր մերը ոչ թէ նման է մի դայլայլիկի, այլ կարծէք խոր ժայռից բղխող մի քանի աղբիւրի ակունքներ փոքրիկ ջրվէժներ կազմելով միմեանց հետ՝ միանում լինին և գնալով, գնալով յորդանում: Եւ որ նշանաւորն է, այդ աղօթքի-երգի ֆօնն էլ մնացել է անարատ, Մայր Էջմիածնում մինչև այժմս էլ երգւում է Հայր մերի հին եղանակը: Ամբողջ պատարագը դեռ Եկմալեանի նօտաներով չեն երգւում, բայց յոյս կայ, որ կարճ ժամանակից յետոյ մեր բոլոր եկեղեցիներում կ'երգուին, երբ այդ նօտերը կրտսպագրուին, որի համար Վեհափառ Կաթուղիկոսի հրամանն ու օրհնութիւնն արդէն ստացած է, պատրաստ են և տպագրական ծախքերը:

Պատեհ ժամանակ մենք մանրամասն կը խօսենք պ. Եկմալեանի այս վերին աստիճանի նշանաւոր աշխատութեան մասին:

Թաղկոպարդին Զրաշէնի եկեղեցուց՝ Գալիանեան, Յալճանեան և ս. Նշան օրիորդական ուսումնարանների աշակերտուհիները ս. Հաղորդութիւն էին ընդունում և այդ առիթով պիոր էին կանգնած, այդ օրը մանաւանդ Հայր մերը մի անբացատրելի միսիթարական տպաւորութիւն էր անում:

—

Ամսոյս 26-ից, երեքշաբթի, սկսում են արքունական թատրոնում ռուս դրամատիկ խմբի ներկայացումները: Այդ օրը պիտի ներկայացնեն Պօտէխինի «Нищіе духомъ» դրաման:

—

Երկուշաբթի նշանաւոր դաշնակահար Ալֆրէդ Բէյզենաուէրի կոնցերտն է:

մանր լուրեր

«Տարազի» նախընթաց համարում տպագրել էինք Կ. Պոլսի մեր թղթակցից ստացած այն տեղեկութիւնը, թէ մի քանի պաշտօնեայ և վաճառական հայեր դաւեր լարելով Ամեն. Պատրիարքի դէմ, նրա հրաժարականը օրեայ հարց են դարձրել: Ռ. Հ. Գ. այդ մասին մարտի 10-ից հետևեալն է հեռագրում. «Երէկ Խառն ժողովում Հայոց Պատրիարքը յայտնեց, թէ որոշվեհտև Դրան հետ յարաբերութիւնները բարելաւելու աշխատութիւններն անհետևանք մնացին, ուստի նա մտադիր է հրաժարել պատրիարքական գահից: Երկարատև վիճաբանութիւններից յետոյ ժողովը վճռեց, թէ դեռ ևս բոլոր միջոցները չեն սպառուած և թէ ներկայ վիճակը թոյլ չի տալիս եկեղեցին առանց պետի թողնել: Ժողովը խնդրեց Պատրիարքին շարունակել իր պարծունէութիւնը»:

—

«Bevue des Revues» հանդիսի վերջին համարում տպագրուած է մի շատ հետաքրքիր յօդուած «Des Heros de Zeitoun» (Զէյթունի դիւցազները) անունով: Հեղինակը, որ Ջաւարշ Անտէորա կեղծ անուան տակ է թաղնուած, հայ նշանաւոր բանաստեղծներից մէկն է:

—

Ռ. Հ. Գ. մարտի 16-ից հեռագրում է Լոնդոնից. Միացեալ-Նահանգներում տեղի ունեցած՝ հայերին համակրական ցոյցերի պատճառով՝ Վաշինգտոնի տաճկական դեսպանը և միսսիայի առաջին քարտուղարը յետ են կանչուած:

—

Լոնդոնից հեռագրում են «Нов. Вр.» լրագրին մարտի 12-ից. «Վերջերս անգլիական մամուլը շատ է խօսում Կրէտէ կղզու, Մակեդոնիայի, Լիբանանի և առհասարակ Տաճկաստանում տեղի ունեցող բոլոր շարժումների մասին: Եւ ճիշդ, որ Տաճկաստանի բոլոր քրիստոնէաբնակ գաւառներում տաճկական կառավարչական կարգերի դէմ դժգոհութիւնը սաստկանում է. յուզմունքն աճում է նոյն իսկ տաճիկ-երիտասարդ սերնդի մէջ: Լոնդոնի յայտնի քաղաքագէտների ցանկութիւնն այն է, որ անգլիական կառավարութիւնը վճռապէս ասպարէզ դուրս գայ Արևելքում իբրև պաշտպան քրիստոնեայ ազգերի, որոնց չարչարում են տաճիկները և այդ քաղաքականութեամբ ամբողջ աշխարհում բարձրացնէ Անգլիայի պատիւը, որ վտանգի ենթարկուեց անցեալ տարի Հայկական հարցում կրած անյաջողութեան պատճառով:

Մակեդոնիայում թէև մինչև այժմ դրդումներ առաջ բերելու ջանքերը տանց մի որ և է օգուտի են տնցել, սակայն յոյս ունեն աւելի լուրջ հետևանքների հասնել առանձին դործակալների միջոցով, որոնց ուղարկում են Մակեդոնիա, յանձնարարելով նրանց, որ ժողովրդի մէջ յոյսեր տա-

բաՅեն, թէ նրանք կազատուեն տաճկի լծի բռնութիւնից արևելեան Եւրոպայի ջանքով։

—

Նորերս Լոնդոն են հասել մի քանի լիուռդ յոյն հայրենասէրների ներկայացուցիչներ. նմանապէս և երիտասարդ-տաճկական կուսակցութեան անդամներ։ Թէ առաջինները և թէ վերջիններն առաջարկեցին մի ընդհանուր կոմիտէտ կազմակերպել, որը պէտք է ջանադիր լինի բարենորոգումներ մըտցնել տաճկական վարչութեան մէջ։

—

Կ. Պոլսի աւստրիական դեսպանը Կ. Պոլսից մեկնեց Վիեննա. նրան պահանջել են ընթացիկ հարցերի համար։

—Կ. Պոլսի ամերիկական դեսպանը պահանջեց, որ ամերիկական հպատակները, որոնք յեղափոխական նպատակներով զէնք են անցկացրել Տաճկաստան, պատժուեն ամերիկական օրէնքներով։

—

Հայաստանի տառապեալներին օգնելու նպատակով նպաստները շարունակւում են թէ Ամերիկայում և թէ Անգլիայում. վերջինումս ժողոված է 34 հազար ֆունտ ստերլինգ։ Սակայն կարիքը շատ մեծ է։

—

Կ. Պոլիս մարտի 19. Գաղտնի ճանապարհներով Զէյթունն զէնք տանելուն արգելք լինելու համար պատերազմական չորս նաւ են ուղարկւում։

Յաւելուած

Տաճկի կառավարութիւնը Ռոդոսում յունական մի նաւ ձերբակալեց վառոդով բեռնաւորած։

—Եգիպտական գործերը և անգլո-եգիպտական զօրքերի Սուդան արշաւելը՝ բոլոր պետութիւններին լարման վիճակի մէջ է դրել։ Անգլիան և Իտալիան արդէն իրար դաշնակից են համարում։ Գերմանիան և Աւստրիան էլ ի նկատի առնելով, որ եգիպտական արշաւանքը իրանց շահերին չի դիպչում, կողմնակից են դոնպոլեան արշաւանքին, հակառակ Ֆրանսիայի և Ռուսիայի։

—Իտալիան և Չաբէշստանը հաշտւում են. պեներալ Պալմենոն ուղևորւեց Մասսովա, որը Հումբերտ թագաւորից լիագօրութիւն ունի Մենելիքի հետ հաշտութեան պայմանների մասին բանակցելու։

—Աղուէի հակատամարտում իտալացիների կրած կորուստը հետևեալն է. 5 գեներալներից 2-ը սպանուած են. 1-ը գերի է ընկել. 7-ը գօրավարներից 2-ը սպանուած են, 1-ը գերի է, 24 վաշտի հրամանատարներից 15-ը պէտք է սպանուած համարել, 1-ը գերուած։ Պատերազմող իտալացիների թիւը հասնում էր 9000-ի. որանցից 3 հազարը բանակ է վերադարձել (որոնց մէջ կային շատ վիրաւորներ), իսկ 5,000 սպանուած և մնացեալները գերի են ընկած։

—Զմիւռնիայի մօտ գտնուող ֆրանսիական նաւատորմիղին հրաման է ուղարկուած մնալ իր տեղը։ Կարծում են, որ մօտ ժամանակներս եգիպտական նաւահանգստներում ծովային ցոյցեր կըլինեն։

—Աւստրիական կայսրը աշխատում է Անգլիայի և Գերմանիայի յարաբերութիւնը բարելաւելու։

—Սուդանի դերւիշները Կասսալան պաշարել են։ Մահդին սրբազան պատերազմ է հրատարակել եգիպտացիների դէմ։ Տասնևեօթ տարեկանից մեծ տղամարդիկ հրաւիրուած են մարգարէի կանաչ դրօշակի տակ։ Սամանի-Դիգման Կասսալայի պաշարումը վերցնելով, կարծում են, կըմիանայ մահդիի գլխաւոր ոյժերի հետ։

—Մարտի 14-ին Պոլիս է հասել բուլղարական իշխանը Ստոյլովի և գինւորական շքախմբի ուղեկցութեամբ։ Ընդունելութիւնը փառաւոր էր։ Սուլթանի մօտ ունկնդրութիւնը տևեց կէս ժամ։ Իշխանին սուլթանի որդին չանձնեց Իմթիազ ադամանդազարդ շքանշանը։ Նրան արքայական մեծութիւն են անւանում։

—Դոնդոլայում, որի գէմ արշաւում են անգլո-եգիպտական զօրքերը, հաւաքուած են 11 հազար դերւիշ. սրանցից 4 հազարը գինուած են Ռէմենգոծնի հրացաններով, 5-ը նիզակաւոր են, իսկ 2 հազարը հեծեալներ։ Անգլիական կառավարութիւնը կենդրոնացնելու է 19 հազարից բաղկացած մի զօրաբանակ, իսկ բեդուինների 7 հազար մարդուց զօրագունդ։

—Վիլհելմ կայսրը, որ այժմ իր ընտանիքով Իտալիայի Նեապոլ քաղաքումն է գտնւում, մտադիր է Ծպտեալ կերպով Հռոմ մտնել։

—Մենելիքը պատրաստւում է մի պատգամաւորութիւն ուղարկելու Կ. Պոլիս, որ քաղաքական նշանակութիւն կունենայ։

—Չաբէշստանը 1 միլիոն ֆունտ ստերլինգ է պահանջում իբրև պատերազմական տուգանք։

—

—Թիֆլիսում, „Новости“-ի ասելով, երդւեալ հաւատարմատարների խորհուրդը այնպէս պէտք է կազմակերպւի, որ տեղեկների թիւը անդամների կիսից աւելի չըլինի։

—Յայտնի աւազակապետ Նաբիճ սպանուած է Ուրմիայում պարսիկ պահնորդ զինուորների ձեռքով։

—Լսւում է, որ կառավարութիւնը մըտադիր է ոչնչացնել բնակարանների վրայ դրուած պետական հարկը։

—„Нов. Вр.“ լրագիրը իր վերջին համարներից մէկում զետեղել է մի յօդուած, կարծիք յայտնելով թէ պէտք է Հայոց Կաթուղիկոսի գահը Էջմիածնից տեղափոխել Ս. Պետերբուրգ։ Լաւ երազ է...

—Մարտի 9-ին կատարեցաւ Մոսկւայում Լազարեան ճեմարանի վերատեսուչ Գ. Քանանեանի հասարակական—մանկավարժական գործունէութեան հրեւանը եւ հիմգարմակը։ Յոբելեարը ստացել է շնորհաւորութիւններ բացի Ռուսիայի զանազան հիմնարկութիւններից, նաև արտասահմանեան երկրներից—Բելգրադից, Կ. Պոլսից և այլն։

—Թիֆլիս են եկել Դրվինցին մականունով օդագնացները (քոյր և եղբայր) և Զատկական տօներին մուշտայիգի այգուց օդապարիկով բարձրանալու են։

—Վրացի կանայք Թիֆլիսում մի ընկերութիւն են կազմել, նպատակ ընտրած լինելով մէջից տալ ընկերութեան անդամներին արժան գնով ձեռք բերելու կենսական մթերքները և այլանհրաժեշտ իրերը, նմանապէս և զարկ տալ կար ու ձևի և ձեռագործի արհեստին։ Ընկերութիւնը այդ առիթով Թիֆլիսում մի առևտրական տուն է հիմնում։

Մեր պատկերները

ԴԵՄ ԽՈՒԿ Ի

(Նկար Լինդենշմիդտի. վորագր. Մ. Վ.Բէբէլի).

Դեղեցիկ է Լինդենշմիդտի նկարը, բայց աւելի գեղեցիկ և խորհրդաւոր է նրա բովանդակութիւնը։ Նայեցէ՛ք, որքան գրացիա ունի, որքան հրապուրիչ է գեղեցկուհին և որքան լմնաստակից է նրա դէմքի արտայայտութիւնը։ Այդ պատուղը, որ նա այդպիսի քնքոյշ ձևով պահում է, ներկայացնում է՝ չարի և բարւոյ խորհուրդը։ Մանուկը ձգտում է հաշակել այդ պտուղը, բայց ձեռքը չի հասնում որովհետև նա դեռ շատ է փոքր չարի և բարւոյ ճաշակն առնելու համար։

Ահա մի սքանչելի նիւթ տատանաւոր բանաստեղծի համար, մի նիւթ, որ մտածող և զգայուն մարդու համար պարունակում է աշխարհային կեանքի ծուծը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Տարազի հետևեալ №-ը լոյս կըտեսնի, ինչպէս միշտ, ոչ թէ կրկնազատիկ կիրակի օրը, այլ միւս կիրակի, ապրիլի 7-ին։

Տարւայ ընթացքում Տարազը, ինչպէս յայտարարում ենք բաժանորդագրութիւնը բանալիս, պէտք է լոյս տեսնի 49—50 №№, իւրաքանչիւր համարը 1 – 2 թերթ։ Սակայն խմբագրութիւնս, հակառակ մեր ամենայորդորանաց, յաճախ ստիպուած է լինում տպագրել մի №, որ 3 թերթից աւելի է լինում։

Ամեն կողմից պահանջում են մեզանից Սբբազան Էջմիածնի պատրիարքի ճինապակու վրայ պատկերը ստանալ։ Մինչև ապրիլի 1-ը Ադբիւր-Տարագի հեռաւոր բաժանորդները եւս ստացած կլինեն մեր այդ նկարը։

Յայտարարում ենք ի պատիւ մեր բաժանորդներին, որոնք կամենում են ձեռք բերել այդ պատկերը և ժամանակին այս մասին չեն յայտնել մեզ, որ ապրիլի 1-ից սկսած Ռուսաստան և անդրկասպեան երկիրները մեր բաժանորդներին այդ պատկերը կուղարկուի ոչ թէ 2 ր. տարեկան մաքսի և ճանապարհածախսի համար — այլ 4 ր., իսկ Կովկաս 3 ր.։

Բայց նա, որ բաժանորդ չէ Ադբիւր-Տարագին, այդ պատկերը ճանապարհածախսով կարող է ստանալ, վճարելով 7 ր., արտասահման 10 ր.։

Մխիթարեան Տարագ կամ Ադբիւր ստացող մեր բաժանորդը կարող է ձեռք բերել այդ պատկերը՝ Կովկասում 4 ր., Ռուսաստանի և Անդրկասպեան երկիրների համար 5 ր. վճարելով։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թիֆլիս. Մշակին. Մենք հայհոյել չգիտենք, մենք դիտենք զրել, ցաւել։ Փողոցի հետ մենք երբէք գործ չենք ունեցել, մենք միշտ ձգտել ենք մօտենալ աստուածներին։ Եթէ ուրանաք եւ չխոստովանէք մեր իղձերը, ձգտումները եւ այս խօսքերի ճշմարտութիւնն ու անկեղծութիւնը, մենք կարող կըլինինք հաւատալ, որ դուք կուրանաք եւ նշմարիտ Աստուծուն...

Գրիգոր Արծրունու անունն ու յիշատակը ինքներդ էլ համոզուած էք, որ մեզ համար աւելի նշանակութիւն է եւ գուցէ աւելի մեծ է նրա յիշատակը մեզ համար, քան թէ ձեզ։ Սակայն չափ չկայ այդ ապացուցանելու եւ ոչ էլ այսօր կարիք։

Անմաքուր, արատաւոր ձեռներով գրիչ եւ բռնած ենք տեսնում այսօրւայ «Մշակը»։ Մեր վիշտն այս մասին է։ Կերէ՛ք, որքան կամենաք մեծ հրապարակախօսի ձեզ ծողած ս. աւանդի եկամուտները, այդ մեզ բոլորովին փոյթ չէ, սակայն անմաքուր իղձեր, արատ բերող անձնանուրուքիւններ ծող չըյանդգնեն նրան մօտենալ...

Մշակի խմբագրութեան անդամ պ. Առաքել Հարախանեանը մեզ հետ է եղել 94 թ. ս. Լուսաւորչի տօնին մեծ հրապարակախօսի դերեզմանին, երբ մենք Թարմ ծաղիկներ ենք եղել սփռում։ Ձշմարիտ է, այդ օրը հրապարակական հոգեհանգիստ չէ կատարուել, սակայն եւ չէ մոռացուել նրա գերեզմանը այդ օրը համրուրելու եւ խնկարկելու։ Անցեալ 95 թուականին մենք ս. Լուսաւորչի տօնին Պետերբուրգ ենք եղել, ուրեմն անկարող էինք մեր նիւթական պարտքը կատարելու, իսկ այս 96 թուականին դուք խոստովանում էք, որ հոգեհանգիստ չէք կատարել Գալով նրա մահուան տարեդարձին, «Մշակի» խմբագրութիւնը ոչ միայն շատ անտող կերպով կատարեց այդ տխուր տարեդարձը, այլ Մշակի խմբագրութեան ոչ բոլոր անդամներն էին անգամ ներկայ։

Ի վերջոյ կարծում ենք, որ Մշակի այժմեան խմբագիրները պարտաւոր են զրպարտութիւններ չանել։ Կրկնում ենք, Տարազը հրբէք փողոցի հետ գործ չէ ունեցել եւ հրբէք էլ չի կարող ունենալ։

Ժրնև. Տիկ. Մ. Գ. Ստացել ենք։ տպագրենք։

—Եր. Պալ. Անկարելի եղաւ տպագրել։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ պատկերազարդ

«ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿ» և. «ԵՐԵՔ ԿԱՏՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

ամենափոքր երեխաների համար
Հրատ. իշխ. Մ. Թումանեանի.

Իւրաքանչիւրի գինն է 20 կոպ.
Վաճառւում են գրավաճառանոցներում և հրատարակչի մօտ. Խարեաթլնակ. փ. № 8.

Дозв. ценз. Тифлисъ, 22 марта 1896 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца, Орбел. ул., д. № 1—2.